խլեց իր միակ զէնքը՝ ծանր մահակը, որ դրած էր կշտին: Անշուշտ մի լաւ հարոած կը ստանայի, եթէ չշտապէի ասել նրան.

— Քո աղան սուրճ է պահանջում:

Նա բարկացած նայեց իմ երեսին եւ մրթմրթաց.

— Դէ՛ այդպէս ասէիր, էլ ո՞ւր ես քնած մարդուն գժոացնում...

Կարծես թէ ես կարող էի նրա քնած ժամանակ հասկացնել, թէ աղան ինչ է պահանջում: Ես իսկոյն ճանաչեցի, թէ ում հետ գործ ունեմ, կամ ով պէտք է լինի իմ ապագայ ընկերը: Հէնց առաջին անգամից մեր մէջ երկպառակութիւն ծագեց:

Նա, առանց իմ վրայ նայելու, մօտեցաւ, ճրագի լոյսը աւելացրեց, յետոյ գնաց բուխարու մօտ, սկսեց կրակ վառել: Այնտեղ ածած փայտի կտորտանքը այնպէս էր ձեռքով ճղոտում, կարծես մատները երկաթից շինուած լինէին:

Ես մտածեցի, որ այդ տեսակ գժերը իրանց թոյլ կողմերը կունենան, այդ մտքով վեր առի նրա մահակը եւ, ճրագի լոյսի առջեւ նայելով, ասացի նրան.

— Ինչ՛ լաւ մահակ ունես:

Նա մոռացաւ սուրճը, թողեց կրակը եւ մօտեցաւ ինձ: Իմ նկատողութիւնը հաճոյական երեւաց նրան:

— Ի՞նչ փայտից է:

— Հոնի փայտից է, ինքս եմ կտրել մեր անտառներից, — պատասխանեց նա մի առանձին պարծենկոտութեամբ: — Մի քուրդ մի ոչխար տոեց, չտոեցի: Ինքս եմ տաշել, ինքս եմ այսպէս կոկել:

— Շատ լաւ փայտ է: Դու որտեղացի՞ ես:

— Չե՞ս իմանում: Շատախցի:

Կարծես թէ շատախցուն ամէն մարդ պէտք է ճանաչէր: Ես սկսեցի նրա հետ հանաքներ անել:

— Այն աղբիւրի ջրից խմե՞լ ես:

— Ո՞ր աղբիւրի:

— Այն աղբիւրի, որ մարդիկ խմում են ու խելօքանում են:

Նա ծիծաղեց, շատախցոց տարօրինակ գժութիւնները վերաբերում էին իրանց երկրում գտնուած մի յայտնի աղբիւրի ջրին: Մենք արդէն մտերմացանք:

— Ինչպէ՞ս եղաւ, որ եկար այստեղ: